ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ

Հայոց բազմադարյան պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Կիլիկյան Հայաստանը, որը, դուրս լինելով Հայոց լեռնաշխարհի սահմաններից, ԺԱ դ. վերջին դարձավ հայոց պետականության վերականգնման հիմնական օջախը: Հայոց պետականությունը տարածաշրջանում գոյատևեց մինչև 1375 թ., իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ 1441 թ. կրկին վերադարձավ Մեծ Հայքի տարածք՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Սսում իրենց գործունեությունը շարունակեցին Կիլիկիայի կաթողիկոսները, որոնց պատմամշակութային առաքելությունը տարածվում էր տարածաշրջանի Հայոց եկեղեցու մի շարք թեմերի վրա: Օսմանյան կայսրության տիրապետության տարիներին ավելի նեղացան Կիլիկիայի կաթողիկոսությանը պատկանող թեմերի սահմանները և ԺԹ դ. վերջին, ինչպես հավաստում է Տ. Մաղաքիա արք. Օրմանյանը, այն սահմանափակվում էր 13–15 վիճակի մեջ, որոնք գտնվում էին պատմական Կիլիկիայի տարածքում: ԺԹ դ. վերջի և Ի դարի սկզբի մեր ժողովրդի գլխին եկած արհավիրքներից հետո, Կիլիկիայի նվիրապետական աթոռը կորցրեց նաև այդ տարածքների մեծագույն մասը, բացի Հալեպի թեմից, ուր և ապաստան էր գտել Տ. Տ. Սահակ Ա Խապայան կաթողիկոսը: Խորհրդային հեղափոխությունից ու Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո նվազեց Կ. Պոլսի պատրիարքության և Ամենայն Հայոց կաթողիկոսարանի խնամարկության հնարավորությունները ֆրանսիական մանդատի տակ անցած Հայոց եկեղեցու թեմերի վրա: Ամենայն Հայոց կաթողիկոսներ Տ. Տ. Գեորգ Ե Սուրենյանց և Տ. Տ. Խորեն Ա Մուրադբեկյանի աջակցությամբ ու Կիլիկիո կաթողիկոսներ Տ. Տ. Սահակ Ա Խապայանի և Բաբկեն Ա Կյուլեսերյանի ջանքերով, 1920-ական թվականներին Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը Տ. Եղիշե արք. Դուրյանի օրոք Կիլիկիայի կաթողիկոսության տնօրինությանը հանձնեց Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի վիճակները, որոնց կառավարումը դժվարացել էր, քանի որ Սուրբ երկրի Հայոց պատրիարքությունն անցել էր անգլիական մանդատի տակ: Այս հիմքի վրա էլ Բեյրութի արվարձան Անթիլիասում հաստատվեց Կիլիկիո աթոռը, որն սկսեց հոգալ Մեծ եղեռնից հետո ֆրանսիական մանդատի տակ հայտնված գաղթականության հոգևոր և եկեղեցական հոգսերը, հետագայում վերանվանվելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն: Այս կաթողիկոսարանի դերը Մերձավոր Արևելքում նշանակալիորեն բարձրացավ սառը պատերազմի տարիներին, իսկ 1958–1988 թթ. Անթիլիասը հակոտնյա դիրք գրավեց Ամենայն Հայոց կաթողիկոսարան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ: Խորհրդային պետության անկումից և Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, երկու նվիրապետական աթոռների գահակալները կրկին վերականգնեցին բարեկամական

փոխհարաբերությունները, սակայն եկեղեցու ամբողջականությանը վերաբերող որոշ էական խնդիրներ իրենց լուծումը դեռևս չեն ստացել:

ԺԱ դարից սկսած Կիլիկիայում հաստատված հայ ազգաբնակչությունը այստեղ ոչ միայն վերականգնեց Հայոց պետականությունը, այլ նաև հսկայական ճիգեր թափեց նոր մակարդակի բարձրացնելու հայոց ազգային մշակույթը: Կիլիկիայում զարկ տրվեց ռազմական և քաղաքացիական կառույցների վանական համալիրների ու եկեղեցիների շինարարությանը: Մեծ թափով զարգացան հայ հոգևոր մշակույթն ու մատենագրությունը, գեղարվեստն ու արհեստները:

Տարածաշրջանում հայ մարդու մշակութային և քաղաքական առաքելության հետազոտությանն էր նվիրված գիտական կոնֆերանսը, որը 2008 թ. հունվարի 14–17-ին կազմակերպել էր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանը Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի հետ Անթիլիասում՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի աջակցությամբ: Հայաստանից և աշխարհի տարբեր երկրներից հրավիրվել էր շուրջ 70 մասնակից[1]:

Միջազգային գիտաժողովը տեղի էր ունենում Անթիլիասի Մայրավանքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսի հովանավորությամբ և նախագահությամբ: Գիտաժողովի վարչական կազմակերպիչ Տ. Նարեկ եպս. Ալեքսեզյանը բացման խոսքում բարի գալուստ մաղթելով հրավիրյալներին, ներկայացրեց գիտաժողովի նյութ հանդիսացող հիմնական թեմաները. «Հայկական Կիլիկիո պատմությունը, աստվածաբանությունը, դիվանագիտությունը, միջնադարյան հայ համալսարանները, ազգագրությունը, գրականությունը, տնտեսությունը, արվեստը, ինչպես նաև կիլիկյան սուրբ մասունքները, որոնք Հայկական Ցեղասպանության դժվար պայմաններուն մեջ հասած են Անթիլիաս»: Բացման նիստի գլխավոր բանախոսը Տ. Տ. Արամ Ա *Կաթողիկոսն էր, որն Հայրապետական*

[1] *Կիլիկիայի պատմությանն ու մշակույթին նվիրված կոնֆերանսներ տեղի են ունեցել նաև նախկինում: Հիշարժան է 1993 թ. Փարիզում տեղի ունեցած և Լևոն Ե Լուսինյան թագավորի մահվան 600-ամյակին նվիրված գիտաժողովը, որն ուղեկցվում էր Սորբոնի համալսարանի մատուռում Կլոդ Արմեն Մութաֆյանի կազմակերպած ցուցադրությամբ: Հատկանշական է, որ այն բացեցին Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը, Հայաստանի երրորդ հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և այն ժամանակվա Մեծի տանն Կիլիկիո - կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ Սարգիսյանը: Նույն թվականին Մեծի Տանն Կիլիկիո Նյու Յորքի եպիսկոպոսարանը (Prelaci) Տ. Տ. Գարեգին Բ Սարգիսյանի նախագահությամբ և Տ. Մեսրոպ արք. Աշճյանի ջանքերով կազմակերպեց թեմայի քննարկմանը նվիրված ևս մեկ գիտաժողով: Պատմական Հայաստանի տարբեր նահանգներին նվիրված կոնֆերանսների շարք ձեռնարկած պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը 2001 թ. աշնանը Կալիֆորնիայի համալսարանում (Լոս Անջելես) տեղի ունեցած գիտաժողովը նվիրեց Կիլիկիայի պատմությանն ու մշակույթին: Առանձին հիշատակման արժանի է նաև միջնադարյան Կիլիկյան Հայաստանի և հարակից խնդիրներին վերաբերող կոնֆերանսների շարքը, որոնց մեջ հիշարժան է 2007 թ. հունիսին Մոնպելիեի համալսարանում պրոֆ. Ժերար Դեդեյանի կազմակերպած գիտաժողովը, որը նվիրված էր Մերձավոր Արևելքում կաթոլիկ, բյուզանդական և Հայոց եկեղեցիների միջև ԺԱ–ԺԴ դդ. ընթացքում տեղի ունեցած փոխհարաբերությունների վերարծարծմանը: Վերջին տարիներին նկատվում է Կիլիկիայի հայոց պատմությանն ու մշակույթին նվիրված գիտական գրականության նոր հոսք. հրատարակվել են Կլոդ Մութաֆյանի, Ժերար Դեդեյանի, Վահե Թաշչյանի, Լևոն Տեր-Պետրոսյանի, Իզաբել Օժեի և այլոց՝ հարցի պատմությանը նվիրված արժեքավոր մենագրությունները:*

պատգամով, ուղենիշ գծեց ողջ գիտաժողովի համար: Նա անգլերենով ընդհանուր վերլուծում կատարեց Հայկական Կիլիկիայի, հայության կյանքի մեջ ունեցած արժեքի ու մեր ժողովրդի պատմությանը բերած նպաստին, իրատեսորեն դիտելով Հայկական Կիլիկիան իր միջկրոնական, միջազգային ու բազմամշակույթ իրավիճակով, նա ընդգծեց. «Կիլիկյան շրջանը հարստացուցիչ եղավ մեր ժողովրդի կյանքին ու պատմության համար ամեն իմաստով: Անիկա կազմակերպված առաջին Սփյուռքը եղավ մեր ժողովուրդին: Ընթացք մը, որ այնքան ալ դյուրին ու հեզասահ պիտի չըլլար: Կիլիկիո մեջ է որ քրիստոնեությունը հանդիպեցավ իսլամության և փոխադարձաբար: Հայկական Կիլիկիո մեջ ծաղկեցավ մշակույթ մը, որ իր յուրահատկությամբ կրնա իրավամբ կոչվիլ Կիլիկյան մշակույթ: Անիկա կը հատկանշվի այն պատմությամբ հատկապես, որ լայն բացված է արտաքին աշխարհին: Նոր շրջապատը և նոր իրականությունը, բնականորեն պատճառ պիտի դառնար մեր մշակույթին վերանորոգման: Ուրիշը ընդունիլ, սակայն առանց կորսնցնելու իր ինքնությունը. այս երևույթն է, որ Կիլիկիան դարձուց յուրահատուկ հայաշխարհ մեր ժողովուրդին համար: Միջեկեղեցական կյանքը ևս եղավ հարստացուցիչ և երկխոսության ճամբով մեր Եկեղեցին Կիլիկյան շրջանին, հավատարիմ մնալով հանդերձ իր աստվածաբանության ու դավանանքին, երկխոսության մեջ մտավ, նոր հորիզոններ բանալով մեր ազգային Եկեղեցվո դիմաց»: Ապա Նորին Սրբությունն անդրադարձավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկա առաքելությանը:

Գիտաժողովի ընթացքում հնչեց 40 զեկուցում, որոնք կազմակերպիչները փորձել էին դասակարգել ըստ թեմաների և բաշխել համապատասխան նիստերի (շուրջ 20) վրա: Իհարկե, այս բաժանումների մեջ կարելի էր նկատել որոշ թեմատիկ անհամապատասխանություններ, որոնք, սակայն, ոչնչով չազդեցին հավաքի լիահունչ կայացման վրա: Գիտաժողովի առաջին օրվա հինգ նիստերը նվիրված էին Հայկական Կիլիկիայի պատմության, դիվանագիտության և հայ միջնադարյան համալսարաններին առնչվող զանազան խնդիրների լուսաբանմանը: «Պատմություն» խորագիրը կրող առաջին երեք նիստերին հնչեցին հետևյալ զեկուցումները. «Կիլիկյան պետության սկզբնավորման խնդրին» անդրադարձավ Էդվարդ Բաղդասարյանը *(Երևան):* Արմեն Կլոդ Մութաֆյանի *(Փարիզ) զեկուցումը նվիրված էր խաչակրության շրջանի ֆրանկ-հայկական պետական փոխհարաբերություններին, իսկ* Թամար Պոյաճյանի *(Լոս Անջելես) զեկուցումն անվանված էր՝ «Մոնղոլներն ըստ միջնադարյան հայկական երեք աղբյուրների»:* Գևորգ Տեր-Վարդանյանը *(Երևան) զեկուցեց «Հակոբ Սսեցու ժամանակագրության պատմագիտական արժեքը» թեմայով, իսկ Լիբանանում Հայաստանի դեսպան* Վահան Տեր-Ղևոնդյանը՝ *«Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի դերը Կիլիկիա-Եգիպտոս հարաբերություններում»: Հաջորդ նիստն անվանված էր «Դիվանագիտություն»: Այստեղ՝ «Արևմտյան դիվանագիտություն Կիլիկիո մեջ [12–15-րդ դարեր]» զեկուցումով հանդես եկավ* Ժան-Կլոդ Ուազենը *(Փարիզ): Նույն նիստի հաջորդ երկու զեկուցումները նվիրված էին Ի դարի պատմության խնդիրներին.* Վահե Թաշճյանը *(Բեռլին) ներկայացրեց «Կիլիկիան պահելու ֆրանսիական ռազմավարությունը և անոր հոլովույթը» զեկու-*

ցումը, իսկ Քնարիկ Ավագյանը *(Երևան)՝ «Կիլիկիահայությունը ԱՄՆ-ում և նրանց նպաստը բնօրրանին» հաղորդումը: Հաջորդ նիստը կրում էր «Հայ միջնադարյան համալսարաններ» ընդհանուր խորագիրը: «Կիլիկիայի հայ միջնադարյան համալսարանները և գրչության կենտրոնները [ընդհ. ներածական]» անվամբ ընդհանուր զեկուցմամբ հանդես եկավ* Արփենիկ Ղազարոսյանը *(Երևան):* Հասմիկ Բաղալյանը *(Երևան) ավելի մասնավորելով նյութը, խոսեց «Սկևռայի գիտամշակութային և ուսումնական կենտրոնի պատմությունը [12–14-րդ դարեր]» նյութի շուրջ, ծանրանալով ԺԲ–ԺԴ դարերի գործունեության վրա: Նիստի վերջին զեկուցման հեղինակ* Ստելլա Վարդանյանի *(Երևան) թեման էր «Կիլիկիայի բժշկական դպրոցը և նրա գիտական ժառանգությունը»:*

Հունվարի 15-ի նիստերը նվիրված էին ազգագրությանը, գրականությանն ու տնտեսությանը: Գիտաժողովի առաջին երկու նիստերում քննարկվում էին Կիլիկիայի բարբառին և ազգագրությանը անդրադարձող նյութերը: Հետաքրքրությամբ լսվեցին Վազգեն Համբարձումյանի *(Երևան) «Կիլիկյան բարբառի ուսումնասիրության ձեռքբերումները և արդի խնդիրները»,* Վերժինե Սվազլյանի *(Երևան) «Ազատագրական պայքարի արտացոլացումը կիլիկյան բանահյուսության մեջ» և* Հակոբ Չոլաքյանի *(Բեյրութ) «Ազգագրություն Լավոդիկեի, անոր մերձակա հայաբնակ գյուղերուն և Պեյլանի գավառակին» զեկուցումները: Ընդմիջումից հետո ելույթ ունեցան* Վահրամ Թաթիկյանը *(Երևան) «Կիլիկյան Հայաստանի գորգերը և կարպետները» թեմայով և* Ժասմին Դում Տրագուտը *(Մյունխեն, Գրաց) «Ասպետությունը Կիլիկյան Հայաստանի մեջ» զեկուցումով: Վերջին ելույթի հեղինակը անդրադարձավ կիլիկյան ձիաբուծարանի բնագրի ընկալման ճանապարհներին, բանաձևելով հայկական ասպետության բնութագիրը: Հաջորդ նիստը նվիրված էր Կիլիկիայի գրական-մշակութային ավանդին: Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանի տնօրեն* Հրաչյա Թամրազյանը *զեկուցեց «Ս. Գրիգոր Նարեկացին և Կիլիկյան բանաստեղծական արվեստի դպրոցը» թեմայով, իսկ* Գրիգոր Պըլտյանը *(Փարիզ) հանդես եկավ «Դեպք և գրականություն՝ Կիլիկիո աղետին առթիվ» գրականագիտական հրապարակումով: Արխիվային և հայագիտական ժառանգության հարցերին էր նվիրված* Հ. Վահան վրդ. Օհանյանի *(Վենետիկ) «Հայր Ղևոնդ Ալիշան և «Սիսուան»-ը զեկուցումը: Ի դարասկզբի Կիլիկիայի հասարակական կյանքի մի շարք խնդիրների լուսաբանմանն էր ուղղորդված* Ռեյմոն Հարություն Գեորգյանի *(Փարիզ) «Կիլիկիո ընկերա-տնտեսական փոփոխությունները 20-րդ դարու սկզբնավորության» նյութը, իսկ Նիքոլաս Քուրեասը (Նիկոզիա) ներկայացրեց «Կիլիկիո և Կիպրոսի վաճառականական կապերը «1270–1310» բանախոսությունը: Կիլիկյան Հայաստանի դրամական ժառանգությանը վերաբերող մի կարևորագույն խնդրի անդրադարձավ* Լևոն Սարյանը *(ԱՄՆ)՝ ներկայացնելով «Կիլիկյան Հայաստանի Կոստանդին Ա-ի (1298-1299) եզակի արծաթ դրամ մը» զեկուցումը:*

Գիտաժողովի երրորդ օրվա նիստերը կազմակերպիչների մտահոգմամբ պիտի վերաբերեին իմաստասիրությանը, աստվածաբանությանը, իրավունքին և սրբերի մասունքներին, սակայն պարզվեց, որ «Իրավունք» *նիստում ընթերց-*

ված զեկուցումներն ավելի համապատասխանում էին աղբյուրագիտությանը և պատմությանը: Մեծ ուշադրությամբ լսվեց Սեդա Տատոյանի *(Լոս Անջելես) զեկուցումը՝ նվիրված «Կիլիկիա՝ իմաստասիրական ավանդը Արևելքի և Արևմուտքի միջև» թեմային: Աստվածաբանական հմուտ էքսկուրս կատարեց* Հ. Լևոն վրդ. Զեքիյանը՝ *հանդես գալով «Կիլիկյան աստվածաբանության մեջ համաքրիստոնեական նոր հորիզոններ – Շնորհալիի և Լամբրոնացիի կոպեռնիկյան հեղաշրջումը» զեկուցումով: Հայոց ծիսական գրականության անկյունաքարային խնդիրներից մեկին էր վերաբերում* h. Շարլ Ռընուի *(Ան Կալկա) «Հայկական «Ճաշոց»ը Կիլիկյան շրջանին» զեկուցումը: Պարականոն գրքերի հետազոտության խնդիր էր իր առջև դրել* Թամար Տասնապետյանը *(Բեյրութ) «Ս. Ներսես Լամբրոնացիի վերափոխման ներբողին պարականոն աղբյուրներուն ուսումնասիրությունը» հրապարակումով, իսկ* Փիթըր Քաուին *(Լոս Անջելես) «Թագավորության աստուածաբանությունը 13-րդ դարու Հայկական Կիլիկիո մեջ» զեկուցումով ի մի հավաքեց բարձրագույն իշխանության մասին կիլիկյան սկզբնաղբյուրների վկայությունները: «Իրավունք» նիստում ելույթ ունեցան* Ազատ Բոզոյանը *(Երևան) «Կիլիկիայի Հայոց Կաթողիկոսարանը և պետությունը 12–14-րդ դարերում» նյութով և* Արմեն Տեր-Ստեփանյանը *(Երևան) «Գահացանկերը Կիլիկիայի պատմության սկզբնաղբյուր» զեկուցումով: Օրվա վերջի երկու նիստերը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմության համար նշանակալի էին մի քանի իմաստներով: Զեկուցումները վերաբերում էին Սսի Կիլիկյան կաթողիկոսարանում պահպանվող Սուրբ Մասունքներին, որոնք հրաշքով փրկվել և փոխադրվել են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի Գանձատուն երջանկահիշատակ Տ. Տ. Սահակ Բ Խապայան Կաթողիկոսի և մի խումբ քաջարի միաբանների ջանքով: Նիստերից առաջինում ելույթ ունեցան* Տիգրան Գույումճյանը *(Ֆրեզնո, Փարիզ)՝ անդրադառնալով «Կիլիկիա» թանգարանի հավաքածոյի կարևորությանը ծիսական մետաղագործության պատմության համար և* Աննա Պալյանը *(Աթենք) «Հայ և հույն ուղղափառ եկեղեցիներու ծիսական արծաթագործությունը օսմանյան շրջանին» զեկուցումով: Նիստի ավարտին Արամ Ա Վեհափառը հատուկ գնահատական խոսք ուղղեց Սիլվիա Աճեմյանին, որ կարևոր դեր է ունեցել «Կիլիկիա» թանգարանի կազմակերպական աշխատանքներին, ինչպես նաև Սսից բերված սրբությունների դասավորման ու ներկայացման գործում: Հաջորդ նիստում լսվեցին հետևյալ երկու զեկուցումները.* Գայանե Էլիազյանը *և* Սուսաննա Բարսեղյանը *(Երևան) զեկուցեցին «Գործակցություն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության և Մատենադարանի միջև՝ «Կիլիկիա» թանգարանի և Բերիո Թեմի ձեռագրային ժառանգության վերականգնման աշխատանքները» թեմայով, իսկ «Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարանին հնատիպ գիրքերը» զեկուցումը ներկայացրեց* Միհրան Մինասյանը *(Հալեպ), որը ստանձնել է այդ կարևոր հավաքածոյի գիտական նկարագրությունը:*

Գիտաժողովի վերջին՝ չորրորդ օրվա նիստերն ամբողջությամբ հատկացված էին Կիլիկյան Հայաստանում ծաղկած արվեստներին:Առաջին նիստում հանդես եկած Լևոն Չուգասզյանը *(Երևան) ներկայացրեց «Կիլիկյան ձեռագիր-*

ներու և մանրանկարչության ընդհանուր ներածական և Միջերկրական ծովի ավազանի արվեստը և Թորոս Ռոսլինի զարդագրերը» զեկուցումը, իսկ Լիլիթ Զաքարյանը *(Երևան)՝ «Տուչչո՞ թե Ռոսլին (մանրանկարի մը պատկերագրական վերլուծություն)» հաղորդումը: Հաջորդ նիստում իրենց բանախոսություններն ընթերցեցին* Ճան Գարզուելը *(Իսպանիա) «Թորոս Ռոսլին և Երուսաղեմ» թեմայով և* Սիլվիա Աճեմյանը *(Բեյրութ) «Կիլիկյան ձեռագիրները Հալեպի մեջ» վերնագրով: Միջօրեից հետո առաջին նիստում հանդես եկավ* Վալենթինո Փաչեն *(Իտալիա), որը ներկայացրեց «Արվեստի կապեր Իտալիո և Կիլիկիո միջև բյուզանդական աշխարհի շրջագծին մեջ» զեկուցումը: Նույն նիստին հանդես եկավ նաև* Վարդուհի Փամպակյանը *(Միլան)՝ «Կիլիկյան շրջանի հայկական պատմական ժանյակ մը» զեկուցումով: Վերջին նիստում ելույթ ունեցավ* Միշել Պաչին *(Իտալիա) «Ֆամակուսթայի հայ եկեղեցվո ցարդ չհրատարակված 14-րդ դարու որմնանկարները» հետաքրքիր զեկուցումով:*

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի նախագահությամբ ընթացող վերջին նիստը հատկացված էր կոնֆերանսի ամփոփմանը և գիտաժողովին ներկա հայագետների ապագայում իրականացվելիք ծրագրերի քննարկմանը. Հր. Թամրազյանի ու մյուս ելույթ ունեցողների կողմից շեշտվեց նիստերի և քննարկումների գիտական բարձր մակարդակը: Վեհափառ Հայրապետը, որ ներկա եղավ գրեթե բոլոր նիստերին, իսկ յուրաքանչյուր նիստի ավարտին եզրափակեց այն, փակման նիստին իր տեսակետներն ու կարծիքը հաղորդեց հայրապետական պատգամով: Վեհափառ Հայրապետը գնահատեց բոլորի մասնակցությունը: Ապա, հայրապետական բարձր գնահատանք հայտնեց Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժանմունքին և նրա տնօրեն, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Զավեն Եկավյանին: Իր խոսքի վերջում Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսը շեշտեց Կիլիկյան թագավորության անկումից հետո բացվող մութ շրջանի ուսումնասիրությունը, մինչև XX դարը ներառյալ, հետազոտելու հեռանկարներն ու անհրաժեշտությունը: Բոլոր մասնակիցներին և իր գործակիցներին շնորհակալության խոսք ուղղեց նաև կազմակերպիչ հանձնախմբի վարիչ Գերշ. Տ. Նարեկ եպս. Ալեմեզյանը:

Գիտաժողովի երրորդ օրը (հունվարի 16) ներկաներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին մեծանուն հայագետ, կաթողիոս Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյանի շիրմին՝ այցելելով «Զարեհյան հուշարձան-դամբարան», ուր միաբանության անդամների ներկայությամբ և Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան հատուկ արարողություն: Նկարագրված չորս օրերը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմության համար աննախադեպ էին: Հատկապես պիտի նշել գիտաժողովի ջերմ մթնոլորտը և քննարկումների գիտական հագեցվածությունը:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ